Եվգենի Կիսին

Իր առանձնահատուկ երաժշտականության, կատարողական վարպետության և կատարումների խորության ու բանաստեղծականության շնորհիվ Եվգենի Կիսինն այսօր վայելում է ողջ երաժշտասեր հանրության սերն ու ակնածանքը՝ համարվելով երկրագնդի ամենապահանջված դասական կատարողներից մեկը:

Նա դաշնամուրի իսկական վարպետ է, որը հանդես է եկել այնպիսի աշխարհահռչակ դիրիժորների և նվագախմբերի հետ, ինչպիսիք են Կլաուդիո Աբադոն, Վլադիմիր Աշքենազին, Դանիել Բարենբոյմը, Լորին Մաազելը, Ռիկարդո Մուտին, Բեռլինի ֆիլհարմոնիկ նվագախումբը, Լոնդոնի սիմֆոնիկ նվագախումբը և Նյու Յորքի ֆիլհարմոնիկը:

Եվգենի Կիսինը ծնվել է 1971 թվականին Մոսկվայում՝ ռուս-հրեական ընտանիքում: Վեց տարեկանից սկսել է հաճախել Մոսկվայի Գնեսինների անվան շնորհաշատ երեխաների հատուկ երաժշտական դպրոց: Նրա միակ ուսուցչուհին եղել է Աննա Պավլովնա Կանտորը:

Կիսինի առաջին համերգը, որի ժամանակ նա նվագել է Մոցարտի Թիվ 20 դաշնամուրային կոնցերտը (K. 466), տեղի է ունեցել 1981 թվականին, երբ երաժիշտն ընդամենը տասը տարեկան էր: Մեկ տարի անց նա Մոսկվայում հանդես է գալիս իր առաջին խոշոր մենահամերգով: 1984 թ. մարտին՝ ընդամենը 12 տարեկան հասակում, երաժիշտը Մոսկվայի կոնսերվատորիայի «Մեծ» սրահում կատարում է Շոպենի թիվ 1 և թիվ 2 դաշնամուրային կոնցերտները՝ Մոսկվայի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ՝ դիրիժոր Դմիտրի Կիտայենկոյի ղեկավարությամբ:
Արևմտյան Եվրոպայում նրա առաջին ելույթը տեղի է ունեցել 1987 թ.-ին՝ «Բեռլին» փառատոնի շրջանակում: 1988 թ. Կիսինը Վլադիմիր Սպիվակովի և «Մոսկվայի վիրտուոզներ» նվագախմբի հետ շրջագայություններով հանդես է եկել Եվրոպայում: Կիսինի առաջին համերգը Լոնդոնում տեղի է ունեցել Լոնդոնի սիմֆոնիկ նվագախմբի հետ՝ Վալերի Գերգիևի ղեկավարությամբ: 1988 թ. դեկտեմբերին նա ելույթ է ունեցել Հերբերտ ֆոն Կարայանի և Բեռլինի ֆիլհարմոնիկի հետ՝ ամանորյա համերգին, որը միջազգայնորեն հեռարձակվում էր և ձայնագրվում գերմանական «Գրամաֆոն» ընկերության կողմից:

1990 թ. Կիսինն առաջին անգամ ելույթ է ունեցել Բի-Բի-Սի-ի «Փրոմենադ» համերգին Լոնդոնում և նույն տարում ունեցել իր հյուսիսամերիկյան դեբյուտը՝ կատարելով Շոպենի դաշնամուրային կոնցերտները Նյու Յորքի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ՝ Զուբին Մեհտայի ղեկավարությամբ: Մեկ շաբաթ անց Կիսինը տպավորիչ մենահամերգով մեկնարկում է «Կարնեգի Հոլի» հարյուրամյակին նվիրված համերգաշարը, որը ձայնագրվել է «BMG Classics»-ի կողմից:

Երաժշտական մրցանակները և փառքն ամբողջ աշխարհից հեղեղել են Կիսինին: 1987 թ. նա ստացել է «Օսակա» սիմֆոնիկ դահլիճի «Կրիստալ» մրցանակը՝ 1986 թ. տարվա լավագույն կատարման համար: 1991 թ. Կիսինը ստացել է «Տարվա երաժիշտ» մրցանակը Սիենայի «Չիգիանա» երաժշտական ակադեմիայից: Նա հատուկ հյուր էր 1992 թ. «Գրեմմի» մրցանակաբաշխությանը: 1995 թ. «Երաժշտական Ամերիկա» հանդեսը Կիսինին ճանաչել է «Տարվա ամենաերիտասարդ երաժիշտը»: 1997 թ. նա արժանացել է հեղինակավոր «Տրիումֆ» մրցանակին՝ ռուսական մշակույթում ներդրած իր ավանդի համար:

Եվգենի Կիսինը առաջին դաշնակահարն է, որ 1997 թ. մենահամերգով հանդես է եկել «Բի-Բի-Սի Փրոմս» հեղինակավոր փառատոնին, և առաջին երաժիշտը, որի մենահամերգով 2000 թ. տեղի է ունեցել նույն փառատոնի բացումը: 2001 թ. Կիսինը Մանհեթենի երաժշտական դպրոցի կողմից արժանացել է «Երաժշտության պատվավոր թեկնածուի» կոչմանը: 2003 թ. դեկտեմբերին Մոսկվայում նա ստացել է Ռուսաստանի երաժշտական ամենապատվավոր մրցանակներից մեկը՝ Շոստակովիչի մրցանակը: 2005 թ. հունիսին Կիսինը դարձել է Լոնդոնի թագավորական երաժշտական ակադեմիայի պատվավոր անդամ: 2005 թ. նա արժանացել է նաև Հերբերտ ֆոն Կարայանի անվան երաժշտական մրցանակին:

Կիսինն իր բազմաթիվ մրցանակների արժանացած ձայնագրություններով մեծ ներդրում ունի լավագույն երաժիշտների կողմից ստեղծված համաշխարհային դասական երաժշտության ձայնադարանի հարստացման գործում:

Վերջին տարիներին Եվգենի Կիսինն արժանացել է «Գրեմմի», Նիդեռլանդների «Էդիսոն Կլասիեկ» և Ֆրանսիայի «Diapason d'Or» և «La Nouvelle Academie du Disque» «Գրան պրի» մրցանակներին: